ՀԱՅԱՍՏԱՆ

Տարեկան բաժանորդագին է Բերա եւ նոր Ցղուքում 100 ֆրանկ, արտաքին նահանգներում եւ Բերայ 120 ֆրանկ։ Վճարումը կատարվում է կանխավ։ Ամսական 10 ֆրանկ։ Առանձին համարը 30 փարա։ Հրատարակվում է ամեն շաբաթ։ Գրասենեակը գտնվում է Գալաթիայում, Ղուլե-Ջամիի մոտ, Ալադյանի տանը։ Ընդունվում են բոլոր տեսակի հայտարարություններ։ Գնահատությունը կատարվում է տողերի քանակով։ Ամսական 20 փարայից պակաս չի գրվում։ Հրատարակության գինը կանխավ։

Տպագրվում է Ա. Ս. ԱԼԱԴՅԱԴՅԱՆԻ տպարանում։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nahé-Han . Balouk-Pazar 16—
Constantinople.

Տպագրված տողի 3 դրուշ է։ Մեկ անգամ հրատարակելու համար նվազ վճարում չի ընդունվում։ Հրատարակության գինը կանխավ։ Ամսագրի փոխանակության համար դիմել խմբագրատուն։

ԱՐՁԱԿԱԳԻՐ

— Տիկին Ա. Չուխաճեան Մեսրոպեան հարցուցած է, թէ ինչպէ՞ս կարելի է ամենաշուտ ստանալ Ամերիկայէն ուղարկուած ծանր ծրարները։

— Ամենաշուտ կարելի է ստանալ, եթէ ծրարին վրայ գրուի «Ամենաշուտ»։

— Տիկին Ա. Ղազարեան Ռուսիայէն ուղարկած է ինծի ծրար մը, որուն վրայ գրուած է «Ամենաշուտ», բայց ես ալ չեմ ստացած։

— Ուրեմն ուղարկեցէք ձեր ծրարը ետ, որպէսզի ես ալ ամենաշուտ ստանամ

նակաց չըլաբերուԹեան յատուկ ծրագրեալ օրինաց մասին։

—Ուսումնական խորհրդոյ ԺԸ. նիստն տեղի ունեցաւ հինգշաբԹի ի խորհրդարանի Ղալաթիոյ։

Խորհուրդն զբաղեցաւ Յերի դիւղի, Իճաճիյեի, Ա.յնԹապի և Պալատու դպրոցական խնդիրներով, ուսուցչական վկայադիր տալու Մ. Աբնաուտեանի, և դոհուԹեամբ տեղեկացաւ որ Դում-Դավուի Մայր Եկեղեցւոյ Թաղ. խորհուրդն Պէշճեան և Լուսաւորչեան երկսեռ վարժարանաց նոր ուղղուԹիւն մը տալու ձեռնարկած է։ Խորհրդոյ անդամներէն Յակոբ Եփենեան Գուրգէն հրաժարած ըլլալով Ուսումնական խորհրդոյ անդամակցուԹենէ, նորա հրաժարականը վարչուԹեան յղուեցաւ։

— Խիկար զաւեշտաԹերԹն այսուհետև յԱդրիանուպոլիս պիտի հրատարակուի, և տպարանի վերաբերեալ պատճառներու համար ուշացաւ հրատարակումն Յունիս ամսաԹերԹին, որ 10–12 օրէն պիտի երևի։

—Վանօրէից խորհուրդն հինգշաբԹի իւր չաբաԹական նիստն ըրաւ Ղալաթիոյ մատենադարանին մէջ։ Նախ կարդաց Մշոյ Ս. Կարապետի ՄիաբանուԹեան կողմանէ ուղղակի առ ինքն գրուած նամակ մը, որով կը հաղորդէ Մշոյ առաջնորդական փոխանորդին վանքին դէմ կառավարուԹեան տուած տեղեկագրին պատճէնը։ Խորհուրդը նկատելով Թէ Մշոյ Ս. Կարապետ վանուց գործոյն կարգադրուԹիւնը վարչուԹիւնն ինքն ստանձնած է՝ առանց խորհրդոյն գործակցուԹեան, որոշեց այն նամակին ալ վարչուԹեան յղել։ Ընդունակեց և աւարտեց Վանօրէից բարեկարգուԹեան ծրագրին քննուԹիւնն, և իր դիւանին յանձնեց պարտուպատշաճ նամակ մ'ալ խմբագրել, և յաջորդ նստի մէջ ստորագրելով ծրագրին հետ աղդային վարչուԹեան հաղորդել և գործադրուԹեան համար աշխատիլ։

— Կը լսեմք, Թէ Տնտեսական խորհուրդը՝ Պատրիարքարանի համար պատրաստած ներքին կանոնագրուԹեան մէջ միանգամայն տրամադրած է, որ Պատրիարքարանէն որոշեալ ժամանակին բացակայ գտնուող պաշտօնակալներէն տուգանք առնուի, և նոր հաստատելի Հանգստեան Միաուկին յատկանայ այս տուգանքին արդիւնքը։

— Փարիզի Հայկազեան Ուսումնասիրաց ԸնկերուԹիւնը բանակցուԹեան մտած է Վանայ կիզրոնական վարժարանի տեսչուԹեան հետ, իւր ծախիւք քանի մը աշակերտ ղրկելու համար։

— ԿաԹուղիկոսական խնդրոյն վրայ, որոյ տարաժամ ու անկերպարան վիճակն ի հարկէ ուշադրուԹեան ու հետաքրքրուԹեան առարկայ եղած է ամեն Հայու, այս օրերս զրոյցներ կը հրատարակուին։ Բնդհանրապուրկի համանուն պաշտօնական լրագրէն հրատարակեց նախ, Թէ Զարը նոր ընտրուԹիւն պիտի հրամայէ, և Թէ Տ. Ներսէս Սրբազան պնդէ իւր հրաժարման վրայ։ Ապա մայրաքաղաքիս էքսբրէս լրագիրը քանի մ'օր յառաջ հրատարակեց, Թէ Զարն տեսնելով որ Տ. Ներսէս Սրբազան կը պնդէ հրաժարական նկին վրայ, հրամայեր է նոր ընտրուԹիւն կատարել։ Սակայն մինչև ցայսօր Պատրիարքարանն ո'ր և է պաշտօնական տեղեկուԹիւն չունի, և հրատարակող լրագիրը ալ՝ ինչպէս կերևի, չեն կրցած մանրամասն ծանօթուԹիւն տալ Թէ նոր ընտրուԹեան պիտի մասնակցի՞ն Թուրքիոյ Հայք ալ, և Թէ՝ միայն նեղն կանխաւ հաստատուի, և դիրերն օտար չդենաւուց չյանձնուին։ Բ. Դուռը պատասխաներ է այս ծանուցագրոյն, բայց ինչ լինելն յայտնի չէ։

— Ո'չ սակաւ ջերմուԹեամբ կըլսուզուի նաև՝ մայրաքաղաքիս առողջապահական միջազգային ժողովոյ մէջ կայսերական կառավարուԹեան կողմանէ եօԹն անդամոյ աւելնալու խնդիրն։ Դեսպանք հուսկ ուրեմն պատասխանած են, Թէ կընդունին այդ յաւելումն, բայց սա՛ պայմանաւ որ նորընծիր անդամք իրրև պարզ խորհրդականք լինին և միայն կարծիք յայտնելու իրաւունք ունենան։

— Բաւական ուշադրուԹիւն գրաւած է՝ անցեալ շաբաԹ և երկքշաբԹի օրերը Պօլսոյ ԹղԹասարուԹեան պաշտօնատան կողմանէ վարնայի համար հանուած օսմանեան շղթենաւուց ի վարնա սրընԹաց կառավմբին մեկնելէն յետոյ հանելին, որով հարկ եղած է յատուկ կառավումբ հանել։ Մրդ՝ կառավարուԹիւնն ամեն փոյԹ կը տանի՝ պէտք եղած միջոցներն հայԹայԹելու համար։

— ԹերԹէմանը–Հադիգաթէն կիմանամք, Թէ կայսերական կառավարուԹիւնը նկատելով մանր դրամոյ տարապայման նուաղուԹեան պատճառաւ հասարակաց կրած նեղուԹիւնն, արքունի փողերանոցին մէջ 30–40 հազար լիրայի մանր դրամ կոխել կուտայ։

— Երզնկայի ոստիկանուԹեան տեսուչ Բէչատ պէյ մայրաքաղաքս եկած է։

— Բոտոլֆ իշխանին ի Պօլիս այցելուԹեան առԹիւ, Աւստրիոյ կայսեր կողմանէ պատուանշան ընդունող վարչական ու պալատական բաղմաԹիւ պաշտօնատարաց մէջ կը գտնուի՝ Օգոստ. ՍուլԹանին անձնական գանձուն նախարար Վսեմ. Յակոբ Էֆէնտի Դաղաեան։

— Կայսերական հրամանաւ, ինչպէս ղօրայ, սպայից ու հրամանատարաց համաղգեստ փոխուելեան, նոյնպէս և քաղաքային պաշտօնատարաց հանդիսական հագուստներուց նոր ձև ընդունած լինելով Նորին ՎեհափառուԹեանն, նոյն ձևով չինելու հրաման տրուեցաւ, որոց սնկ է։

—Օգոստ. ՍուլԹանն այս տարի ալ մայրաքաղաքիս այլ և այլ Թաղերու կարօտելոց միս բաշխել կուտայ։

— Հալէպի կուսակալ Ձէմիլ փաշա՝ Մարաչի կառավարչին տեղեկագրէն լսանալով՝ գրած է առ ներքին գործոց նախարարուԹիւն, Թէ ձերբակալեալ են ԶէյԹունի դվխաւոր աւազակներէն Քիւրեքլիօղլու Խաչատուր, Դաիլան–օղլու Հաչեր և մարդասպան Տ. Յովհաննէսեան ՅարուԹիւն, և Թէ՝ ի ԶէյԹուն կատարեալ անդորրուԹիւն ու խաղաղուԹիւն կը տիրէ, և հնազանդ ժողովուրդն այս պատճառաւ բարեմաղթուԹիւններ կընէ Օգոստափառ ՍուլԹանի համար։

— Սրևելեան-Րումելիի կուսակալ Կավրիէլ փաշա՝ ըստ առաջարկուԹեան ելմտական վերատեսչին, հրամայեր է որ Պուլղարլիայէն յԱրևելեան–Րումելի ներմուծեալ վաճառքներուն ու բերքերուն համար մաքս առնուի՝ օտար վաճառաց համար որոշեալ սակադնոց համաձայն։ Ցիշեալ կուսակալուԹիւնը Պուլղարիոյ իշխանուԹեան հետ բանակցուԹեան մտած էր այս խնդրոյն կարգադրուԹեան համար, սակայն կարելի չեղաւ իրաւախոհուԹեամբ կարգադրել։

— Րումճուգի բնիկ մահմետականներէն 20 ընտանիք երէկ առաւօտ ցամաքի ճանապարհաւ մայրաքաղաքս դաղԹեցին։

— Միջերկրականի իտալական նաւատորմին հրամանատար Ծովապետ Ագիճո, երէկ առաւօտ երկու որդւոցն հետ ՕկիւպԹինօ չոգենաւով մայրաքաղաքս գալով՝ Թարապիա իտալական դեսպանատունն իջաւ։ Շաբաթ մը պիտի մնայ մայրաքաղաքս, և Օգոստ. ՍուլԹանին ալ պիտի ներկայանայ։

— Թարիդ կը գրէ այս առաւօտ, Թէ ըստ նորագոյն տեղեկուԹեանց՝ ի Լոնտոն դումարեալ դեսպանախորհուրդն լինչ լինչ խորհրդակցուԹենէ յետոյ ցրուեր է ապարդիւն, և Ա.նդղիոյ ծրագիրը՝ Դաղղիոյ, և փոխադարձաբար Դաղղիոյ առաջարկուԹիւնը՝ Անդղիոյ ընդունելի չլինելուն պատճառաւ, Ա.նդղիոյ կառավարուԹիւնը Գերմանիոյ միջամտուԹիւնը խընդրեր է, բայց նա ալ մերժեր է։ Ըստ ոմանց, կը յաւելու Թարիդ, գաղղիական դեսպան Պ. Վատինկթոն առաջարկեր է՝ դեսպանախորհուրդն յետաձգել ցառաջիկայ հոկտեմբեր։

— Առևտրական պաշտօնատունը Պուլսայի հանքային ջրոց վրայ տեղեկագիր մը պատրաստած է, որ պետական խորհրդոյ պիտի մատուցուի մօտերս։

— Կայսերական հրամանաւ, մօտերս արքունի նաւարանին մէջ նոր շոգենաւու մը շինուԹեան պիտի ձեռնարկուի, որոյ սրընԹացուԹեան աստիճանը պիտի լինի մէկ ժամու մէջ 12 մղոն։

— Իւսկիւտար Զէյնիփաշա–պաղչէսիի բնակիչներէն կեսարացի Դալէմքեար Պօղոս աղա երէկ Սէլամլիկ սրճարան մը նստած առեն, կուրծքին վրայ յանկարծ ցաւ մը զգալով սրճարանին քովի դեղատունը կը փութայ, ուր բժիշկ մը գտնուելով կը զննէ և կը պատուիրէ առն երթալ չուտով. բայց խեղճը՝ առն չհասած, ճամբուն վրայ կիյնայ կաւանդէ հոդին։ Պօղոս աղա բաղմածանօթ էր Իւսկիւտարցոց. սրամիտ անձ մ'էր, և յաճախ լուրջ դիտողուԹիւններ կընէր աղդային գործոց, խնդրոց ու ընԹացից վրայ։

— ԹերԹէմանը Հադիգաթի մէջ կը կարդանք. «Բաւական ժամանակ առաջ, Անատօլու–Հիսարի բնակիչք այդ գիւղին Կէօք–սուտանող փողոցին վրայ մարդու մը կը հանդիպէին, որ առաւօտէն մինչև երեկոյ ոտքի վրայ կենալու համբաւն ունէր. կը հաւաստէին իսկ Թէ գիշերներն ալ այդ դիրքին մէջ կանցունէ։ Պարզամիտք կը կարծէին Թէ այդ մարդը սուրբ մ'է։ Կանայք մանաւանդ կատարեալ հաւատքով այն տեղ կերԹային, ուր սուրբ մարդը ցիցի պէս անկուած էր և բոլորտիքը կը հաւաքուէին, մին ձեռքերը կը համբուրեր, ուրիշ մը ծունգերը, և այլն։ Բայց քանի մ'անձեր, այս խաղերէն չխաբուելով և այդ սուրբ մարդուն տարօրինակ կերպերէն բան մը չհասկնալով, ոստիկանուԹեան իմաց տուին։ ՔննուԹենէ վերջ, սուրբն յայտարարեց Թէ իւր անունն է Հաճի Ալի և Պոլսոյ մէջ «իւր աղօթքները կատարելու յարմար վայր մը չգտնելով, առ այժմ իւր գտնուած տեղն ընտրած էր, որ պահանջած ամեն պայմանները կը ընուր ըստ ինքեան։ Յարեց Թէ կուզէր Մեքքէ ուղևորիլ, և հազուստ մը հայԹայԹելու համար ստակ չունի։ Հաճի Ալի ընդհատուԹեամբ քաղաքապետական պաշտօնատունը տարուած է»։

— Ա.յս երկուշաբԹի գիշեր, Մարմարա կղզւոյն համանուն գիւղին մէջ մեծ հրդեհ մը ծագելով 600 տուն այրեր են. ժողովուրդը, մերկ և անպատսպար, մեռակայ գիւղերն ու դաշտերը սփռուեր է, օգնուԹիւն խնդրելու համար։ Օգոստափառ ՍուլԹանն հրամայեր է քաղաքապետուԹեան և ծովային նախարարուԹեան որ հարկ եղած օգնուԹիւնք ղրկուին անյապաղ։ Վրաններ և մխ ղրկուեր են անմիջապէս։

— Պալըքէսէրի կուսակալուԹիւնն յուլիս 25 Թուով հեռագրած է առ ներքին գործոց նախարարուԹիւնն, Թէ Էրտէքի փոխ–կառավարչէն Մարմարա ղրկած է 2300 օխա հաց, Թէ՝ Պօլսէն ղրկուած չոգենաւուն հասնելուն վրայ ծանօթուԹիւն չկայ, Թէ Պալըքէսէրի մէջ 5000 ղրչ հաւաքուած և Պանդրմայի փոխ–կառավարչին ղրկուած է, որ տեղւոյն ժողովրդէն հանգանակեալ գումարին և պատրաստեալ պարէնին հետ յատուկ չոգենաւով տանի և բաշխէ կարօտելոց, և Թէ՝ նահանգին ուրիշ կողմերն ալ ղրկուած է որ հանգանակուԹիւն բանան։

— Սէլանիկէն ԹերԹէմանը–Հադիգաթի տրուած մանաւոր լուրերէ կիմացուի, որ Ա.վրԹը–հիսարի կառավարական պաշտօնատունը բոլորովին այրեցաւեր եղեր է, մէջը գտնուածներն ամենքն ալ մխիր դարձեր են, և այս պատճառաւ կէս միլիոն ղրչ չլսաս պատճառեր է։

— Կըսուի, Թէ ԳարԹալի և Շիլէի կողմերն ասպատակող աւազակաց վրայ ղրկուած Նուրի պէյ 22 աւազակ ձերբակալած է մինչև ցայսօր։

— Անցեալ շաբաԹ հրատարակեցինք Գարատաղի իշխանին կողմանէ Տանիէլ պատուանշան ընդունող օսմանեան պաշտօնատարաց ցուցակն։ Ցիշեալ պատուանշանն նշանն ընծայուած է նաև զինուորական նախարար Դաղի Օսման փաշայի, պալատան դիւանապետ Ալի Րիզա փաշայի, պալատան ադբարողապետ Միւնիր փաշայի, կայսերական Թիկնապահներէն ՆուսրեԹ փաշայի, առաջին սեռնեկապետ Օսման պէյի, Նորին ՎեհափառուԹեան մանաւոր քարտուղար Րէչիտ պէյի, Թարիդ լրագրոյ արտօնատէր Ֆիլիպ Էֆէնտիի, և Ձիվանեան Նշան Էֆէնտիի։

(ԹղթակցուԹիւնք փունջի)

Շուտով 25 Յուլ. 1884

«Ինչպէս նախորդ նամակաս դրած էի, տեղւոյս Թատերասէրաց–Ուսումնասիրաց ընկերուԹիւնը, նախնի գանձապետին հետ երեք ամսէ հետէ դատուելէ ղինի, վերջապէս ամսոյս 18 ին դատն աւարտեցաւ և վճիռ արտասանուեցաւ ի նպաստ ընկերուԹեան։ Վճիռը կը պահանջէ, որ գանձապետը 2600 ղրուշի չափ դումար մը վճարէ ընկերուԹեան, միանգամայն 30 օր ժամանակ Թողլով նմա, որ եԹէ կամի՝ վերաքննուԹեան երԹայ։ Ընդհանուր տեսուչը և պուլիսական վարժապետանոցին տեսուչը։ Հետևեալ կիրակի օր, ամսոյս 15 ին, կատարեցաւ պարգևաբաշխուԹեան հանդէսը։ Վարժարանին դվխաւոր դասատուն առենախօսուԹիւն ըրաւ և դպրոցին միամեայ տեղեկագիրը կարդաց՝ աշակերտաց վկայականները բաշխելով։ Յետոյ վարիչ պաշտօնեայն ճառ խօսեցաւ, աղգային երգեր ըսուեցան, և քաղաքիս աւագ քահանայն Պահպանիչ և մաղԹանք կարդալով փակեց հանդէսը։

«1–2 ամսէ ի վեր ընԹերցարան մը հաստատուած է ասա՝ ձեռամբ մի քանի պատուաւոր ազգայնասիրու բաժանորդական ընկերուԹեան։ Այս ընԹերցարան երեք լրագիր կստանայ առ այժմ, երկու հայերէն և մի պուլկարերէն։

«Կը լսեմք Թէ վառնացի պատուաւոր Հայ ընտանիքէ երիտասարդ մը ծովու մէջ լուացուած առեն խեղդամահ եղեր է»։

Այսօր լրագրոյս չորրորդ երեսը կը տեսնուի վեպ մը, որոյ մնացորդն պիտի հրատարակուի յաջորդ թերթով։ Այսուհետեւ երբեմն պիտի հրատարակեմք այսպես մեկ երկու թերթերով հրատարակելի նետաքրքրական, հրահանգիչ եւ զբօսուցիչ վէպեր, յուսալով որ հաճոյ կը բոլի մեր ազնիւ ընթերցողաց։

—

Փառնչէ հեռ բաժանորդագրուԹենէ հաշիւ առնելոցներէ կը խնդրուի, որ հոգին վշտել առանց այլ և այլոց յոյժ ղեղ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրքիոյ մէջ հաստատեալ օտար ԹղԹատարուԹեանց բարձման խնդիրն՝ այս շաբԹու ո'չ սակաւ ջերմուԹեամբ յուզուեցաւ, Թէ՛ Բ. Դրան և Թէ՛ դեսպանատանց մէջ։ Թուի, Թէ կայսերական կառավարուԹիւնն անդրդուելի պիտի ձնայ իւր որոշման մէջ։ Դեսպանք այս շաբԹու համիմատ ծանուցագիր մը տուին Բ. Դրան, որով՝ ըստ Թարիդի՝ կընդունին օտար ԹղԹատարուԹեանց բարձումն, բայց պայմանաւ որ օսմանեան չոգենաւուց բաւական լինելն կանխաւ հաստատուի, և դիրերն օտար չդենաւուց չյանձնուին։ Բ. Դուռը պատասխաներ է այս ծանուցագրոյն, բայց ինչ լինելն յայտնի չէ։

— Ո'չ սակաւ ջերմուԹեամբ կըյուզուի նաև՝ մայրաքաղաքիս առողջապահական միջազգային ժողովոյ մէջ կայսերական կառավարուԹեան կողմանէ եօԹն անդամոյ աւելնալու խնդիրն։ Դեսպանք հուսկ ուրեմն պատասխանած են, Թէ կընդունին այդ յաւելումն, բայց սա՛ պայմանաւ որ նորընծիր անդամք իրրև պարզ խորհրդականք լինին և միայն կարծիք յայտնելու իրաւունք ունենան։

— Բաւական ուշադրուԹիւն գրաւած է՝ անցեալ շաբաԹ և երկքշաբԹի օրերը Պօլսոյ ԹղԹատարուԹեան պաշտօնատան կողմանէ վարնայի համար հանուած օսմանեան շղթենաւուց ի վարնա սրընԹաց կառավմբին մեկնելէն յետոյ հանելին, որով հարկ եղած է յատուկ կառավումբ հանել։ Մրդ՝ կառավարուԹիւնն ամեն փոյԹ կը տանի՝ պէտք եղած միջոցներն հայԹայԹելու համար։

— ԹերԹէմանը–Հադիգաթէն կիմացուի, Թէ կայսերական կառավարուԹիւնը նկատելով մանր դրամոյ տարապայման նուաղուԹեան պատճառաւ հասարակաց կրած նեղուԹիւնն, արքունի փողերանոցին մէջ 30–40 հազար լիրայի մանր դրամ կոխել կուտայ։

— Երզնկայի ոստիկանուԹեան տեսուչ Բէչատ պէյ մայրաքաղաքս եկած է։

— Բոտոլֆ իշխանին ի Պօլիս այցելուԹեան առԹիւ, Աւստրիոյ կայսեր կողմանէ պատուանշան ընդունող վարչական ու պալատական բաղմաԹիւ պաշտօնատարաց մէջ կը գտնուի՝ Օգոստ. ՍուլԹանին անձնական գանձուն նախարար Վսեմ. Յակոբ Էֆէնտի Դաղաեան։

— Կայսերական հրամանաւ, ինչպէս ղօրայ, սպայից ու հրամանատարաց համաղգեստ փոխուելեան, նոյնպէս և քաղաքային պաշտօնատարաց հանդիսական հագուստներուց նոր ձև ընդունած լինելով Նորին ՎեհափառուԹեանն, նոյն ձևով չինելու հրաման տրուեցաւ, որոց սնկ է։

—Օգոստ. ՍուլԹանն այս տարի ալ մայրաքաղաքիս այլ և այլ Թաղերու կարօտելոց միս բաշխել կուտայ։

— Հալէպի կուսակալ Ձէմիլ փաշա՝ Մարաչի կառավարչին տեղեկագրէն լսանալով՝ գրած է առ ներքին գործոց նախարարուԹիւն, Թէ ձերբակալեալ են ԶէյԹունի դվխաւոր աւազակներէն Քիւրեքլիօղլու Խաչատուր, Դաիլան–օղլու Հաչեր և մարդասպան Տ. Յովհաննէսեան ՅարուԹիւն, և Թէ՝ ի ԶէյԹուն կատարեալ անդորրուԹիւն ու խաղաղուԹիւն կը տիրէ, և հնազանդ ժողովուրդն այս պատճառաւ բարեմաղթուԹիւններ կընէ Օգոստափառ ՍուլԹանի համար։

— Սրևելեան-Րումելիի կուսակալ Կավրիէլ փաշա՝ ըստ առաջարկուԹեան ելմտական վերատեսչին, հրամայեր է որ Պուլղարլիայէն յԱրևելեան–Րումելի ներմուծեալ վաճառքներուն ու բերքերուն համար մաքս առնուի՝ օտար վաճառաց համար որոշեալ սակադնոց համաձայն։ Ցիշեալ կուսակալուԹիւնը Պուլղարիոյ իշխանուԹեան հետ բանակցուԹեան մտած էր այս խնդրոյն կարգադրուԹեան համար, սակայն կարելի չեղաւ իրաւախոհուԹեամբ կարգադրել։

— Րումճուգի բնիկ մահմետականներէն 20 ընտանիք երէկ առաւօտ ցամաքի ճանապարհաւ մայրաքաղաքս դաղԹեցին։

— Միջերկրականի իտալական նաւատորմին հրամանատար Ծովապետ Ագիճո, երէկ առաւօտ երկու որդւոցն հետ ՕկիւպԹինօ չոգենաւով մայրաքաղաքս գալով՝ Թարապիա իտալական դեսպանատունն իջաւ։ Շաբաթ մը պիտի մնայ մայրաքաղաքս, և Օգոստ. ՍուլԹանին ալ պիտի ներկայանայ։

— Թարիդ կը գրէ այս առաւօտ, Թէ ըստ նորագոյն տեղեկուԹեանց՝ ի Լոնտոն դումարեալ դեսպանախորհուրդն լինչ լինչ խորհրդակցուԹենէ յետոյ ցրուեր է ապարդիւն, և Անդղիոյ ծրագիրը՝ Դաղղիոյ, և փոխադարձաբար Դաղղիոյ առաջարկուԹիւնը՝ Անդղիոյ ընդունելի չլինելուն պատճառաւ, Անդղիոյ կառավարուԹիւնը Գերմանիոյ միջամտուԹիւնը խընդրեր է, բայց նա ալ մերժեր է։ Ըստ ոմանց, կը յաւելու Թարիդ, գաղղիական դեսպան Պ. Վատինկթոն առաջարկեր է՝ դեսպանախորհուրդն յետաձգել ցառաջիկայ հոկտեմբեր։

— Առևտրական պաշտօնատունը Պուլսայի հանքային ջրոց վրայ տեղեկագիր մը պատրաստած է, որ պետական խորհրդոյ պիտի մատուցուի մօտերս։

— Կայսերական հրամանաւ, մօտերս արքունի նաւարանին մէջ նոր շոգենաւու մը շինուԹեան պիտի ձեռնարկուի, որոյ սրընԹացուԹեան աստիճանը պիտի լինի մէկ ժամու մէջ 12 մղոն։

— Իւսկիւտար Զէյնիփաշա–պաղչէսիի բնակիչներէն կեսարացի Դալէմքեար Պօղոս աղա երէկ Սէլամլիկ սրճարան մը նստած առեն, կուրծքին վրայ յանկարծ ցաւ մը զգալով սրճարանին քովի դեղատունը կը փութայ, ուր բժիշկ մը գտնուելով կը զննէ և կը պատուիրէ առն երթալ չուտով. բայց խեղճը՝ առն չհասած, ճամբուն վրայ կիյնայ կաւանդէ հոդին։ Պօղոս աղա բաղմածանօթ էր Իւսկիւտարցոց. սրամիտ անձ մ'էր, և յաճախ լուրջ դիտողուԹիւններ կընէր աղդային գործոց, խնդրոց ու ընԹացից վրայ։

— ԹերԹէմանը Հադիգաթի մէջ կը կարդանք. «Բաւական ժամանակ առաջ, Անատօլու–Հիսարի բնակիչք այդ գիւղին Կէօք–սուտանող փողոցին վրայ մարդու մը կը հանդիպէին, որ առաւօտէն մինչև երեկոյ ոտքի վրայ կենալու համբաւն ունէր. կը հաւաստէին իսկ Թէ գիշերներն ալ այդ դիրքին մէջ կանցունէ։ Պարզամիտք կը կարծէին Թէ այդ մարդը սուրբ մ'է։ Կանայք մանաւանդ կատարեալ հաւատքով այն տեղ կերԹային, ուր սուրբ մարդը ցիցի պէս անկուած էր և բոլորտիքը կը հաւաքուէին, մին ձեռքերը կը համբուրեր, ուրիշ մը ծունգերը, և այլն։ Բայց քանի մ'անձեր, այս խաղերէն չխաբուելով և այդ սուրբ մարդուն տարօրինակ կերպերէն բան մը չհասկնալով, ոստիկանուԹեան իմաց տուին։ ՔննուԹենէ վերջ, սուրբն յայտարարեց Թէ իւր անունն է Հաճի Ալի և Պոլսոյ մէջ «իւր աղօթքները կատարելու յարմար վայր մը չգտնելով, առ այժմ իւր գտնուած տեղն ընտրած էր, որ պահանջած ամեն պայմանները կը ընուր ըստ ինքեան։ Յարեց Թէ կուզէր Մեքքէ ուղևորիլ, և հազուստ մը հայԹայԹելու համար ստակ չունի։ Հաճի Ալի ընդհատուԹեամբ քաղաքապետական պաշտօնատունը տարուած է»։

— Ա.յս երկուշաբԹի գիշեր, Մարմարա կղզւոյն համանուն գիւղին մէջ մեծ հրդեհ մը ծագելով 600 տուն այրեր են. ժողովուրդը, մերկ և անպատսպար, մեռակայ գիւղերն ու դաշտերը սփռուեր է, օգնուԹիւն խնդրելու համար։ Օգոստափառ ՍուլԹանն հրամայեր է քաղաքապետուԹեան և ծովային նախարարուԹեան որ հարկ եղած օգնուԹիւնք ղրկուին անյապաղ։ Վրաններ և մխ ղրկուեր են անմիջապէս։

— Պալըքէսէրի կուսակալուԹիւնն յուլիս 25 Թուով հեռագրած է առ ներքին գործոց նախարարուԹիւնն, Թէ Էրտէքի փոխ–կառավարչէն Մարմարա ղրկած է 2300 օխա հաց, Թէ՝ Պօլսէն ղրկուած չոգենաւուն հասնելուն վրայ ծանօթուԹիւն չկայ, Թէ Պալըքէսէրի մէջ 5000 ղրչ հաւաքուած և Պանդրմայի փոխ–կառավարչին ղրկուած է, որ տեղւոյն ժողովրդէն հանգանակեալ գումարին և պատրաստեալ պարէնին հետ յատուկ չոգենաւով տանի և բաշխէ կարօտելոց, և Թէ՝ նահանգին ուրիշ կողմերն ալ ղրկուած է որ հանգանակուԹիւն բանան։

— Սէլանիկէն ԹերԹէմանը–Հադիգաթի տրուած մանաւանդ լուրերէ կիմացուի, որ Ա.վրԹը–հիսարի կառավարական պաշտօնատունը բոլորովին այրեցաւեր եղեր է, մէջը գտնուածներն ամենքն ալ մխիր դարձեր են, և այս պատճառաւ կէս միլիոն ղրչ չլսաս պատճառեր է։

— Կըսուի, Թէ ԳարԹալի և Շիլէի կողմերն ասպատակող աւազակաց վրայ ղրկուած Նուրի պէյ 22 աւազակ ձերբակալած է մինչև ցայսօր։

— Անցեալ շաբաԹ հրատարակեցինք Գարատաղի իշխանին կողմանէ Տանիէլ պատուանշան ընդունող օսմանեան պաշտօնատարաց ցուցակն։ Ցիշեալ պատուանշանն նշանն ընծայուած է նաև զինուորական նախարար Դաղի Օսման փաշայի, պալատան դիւանապետ Ալի Րիզա փաշայի, պալատան ադբարողապետ Միւնիր փաշայի, կայսերական Թիկնապահներէն ՆուսրեԹ փաշայի, առաջին սեռնեկապետ Օսման պէյի, Նորին ՎեհափառուԹեան մանաւանդ քարտուղար Րէչիտ պէյի, Թարիդ լրագրոյ արտօնատէր Ֆիլիպ Էֆէնտիի, և Ձիվանեան Նշան Էֆէնտիի։

— Շիլէեն նորվէկ ճանբորդք լուր տուած են, թէ Պայրամի տօնէն օր մը յառաջ աւազակախումբ մը Պօղոսնճի և Իսալի գիւղերը կոխեր են, սակայն բոլորովին չեն յայղաղեր այս անգամ, վասն զի նոյն կողմերն հսկող ոստիկանք ու զինուորք, գիւղացւոց օգնութեամբ ձերբակալեր են յանդուգն աւազակաց չորսն, որոց առաջին հարձախօրձէն ստուգուեր է թէ աւազակք Շիլէի Փաշա-քէօյ անուն յունական մեծ գիւղին բնակիչներն են, և թէ այդ գիւղացւոց մէկ մասն առաջին անգամ չէ որ այսպիսի յախուռն ասպատակութիւններ կ'ընեն։

— Քանի մ'օր յառաջ Դուռ դաֆուի բացերը 3-4 անգղիացի տղայք մակոյկով մը զբօսած ատեն, եղերքէն տեսնուելով որ մակոյկը դէպ ի կղզիները կը սրանայ և չորս կողմէն ջուր կառնու, ցէվէճի ծակոր անուն քաջասիրտ հայազգի մը խկոյն նաւակն իջուցեր և գացեր աղատեր է տղայքն։ Ճաճախ լսուած են Դուռդափուի հայազգի նաւավարաց այսպիսի դիւցազնութիւնք։

— Իսկիւտար Զիլիֆտար պահճէխէի կողմը չորս զաւակաց տէր հայ կին մը վերջերս յղի լինելով, հայ կնոջ մը խորհրդով ուզեր էյզութիւնն անցունել, և մէկ ոսկի յանձներ է նմա՝ յոյն դայեակ մը բերել տալու համար որ հարկ եղած դարմանն ընէ։ Բղէն չդիմանալով տրուած դէղոյ սաստկութեան և տղի ունեցած գործոզութենց, քանի մը օր դառն տանջանօք տառապելէ յետոյ, մեռեր է անցեալ ուրբաթ։ Դայեակը և նորա միջնորդն այժմ բանտարկուած են, և բաղմամեայ բանտարկութեան պիտի դատապարտուին։

— Նախընթաց երեկոյ 50–55 տարեկան մահմետական մը եէսիտուլէի երկաթուղւոյ կայարանէն տոմս առնելով դէպ ի կառախումբ գնացած տեղն յանկարծ լինելը մեռեր է, և երկաթուղւոյ ընկերութեան բժիշկն ի քննութիւն կոչուելով՝ հաստատեր է թէ կաթուածամահ եղած է։

— Մայրաքաղաքիս չուխտաքան դէսպանատան դռնապանն հինգշաբթի Բ. Դուռը թուղթեր տանելու համար դէսպանատունէն ելնելով քանի մը քայլ առնելուն պէս, ձիաւորէ մը կոխոտուեր, վիրաւորուեր և մօտակայ դեղարանը տարուեր է, սակայն ձիաւորն ճամբան չարունակեր է անփոյթ ամենևին։

— Հեռագրական պաշտօնատան նախորդ դործակիցներէն Իսհադ էֆէնտի և նորա հռչակաւոր ընկերն Գրիգոր, կըսէ Թաբիդ, նախընթաց գիշեր ձերբակալեցան՝ դեղարան մը մտնել փորձած ատեն։ Սոքա քանի մը տարի յառաջ բանտարկուեր են, կասկած լինելով թէ հեռագրական պաշտօնատան մնտուկը բացած և բաղում լիրա վերուցած են, բայց ապա արձակուեր են ընդ երաշխաւորութեամբ։

Թարիգ ի լրոյ կը հրատարակէ այսօր, թէ առաջին աստիճան Մէճիտիյէ պատուանշան տրուած է Ճունայ պատրիարքական տեղապահ Ագաթանգէղոս Մեսրոպեանի։

— Փայասի (Աասանա) վոխտառվարիչ անուանուեր է Ըսլամհիյէի վոխտառավարիչ Հիւսէյին Հիւանի պէյ։

— Զորրորդ տոհիճան Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ՝ տոքթոր Գ. Պէրթրանի։

— Մայրաքաղաքիս խնայողական անտուկին (էմնիյէթ սանտըղը) անօրէն անուանեցաւ Յակոբ Եֆէնտի Թրէնկեան։

— Աւստրիոյ կայսեր կողմանէ, Ս. Ստեփաննոս պատուանշանին մեծ ժապաւէնը՝ գինուորական դործոյ նախարար Ղազի Օսման փաշայի, և Լէոփոլտ պատուանշանի մեծ ժապաւէնը՝ Սերվէր փաշայի, պալատան դիւանապետ Ալի Րիզա, կայսերական թիկնապահ Նուսրէթ, պալատան արտողաբա Միւնիր, և Ֆէրիդ Վէլի Րիզա փաշաներուն նուիրուած է։

— Գօղանի կառավարիչ անուանեցաւ՝ Նիյազէի նախորդ կառավարիչ Շերիֆ պէյ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 28 Յուլիս 1884

Ֆունտ	8—38
Երկաթուղեայ . . . Ֆրանգ	44—25
Թրամուէյ . . . . . Լ. Օ.	2—92
1863 ի փոխառութիւն Ֆրանգ	58—
1865 ի » »	55—
1869 ի » »	49—50
1872 ի » »	43—50

Օսմանեան լիրան 100 դրուշէն

Մէճիտիյէ	108— 8
Մէճալիք	100—20
Հինգնոց	102—20
Վեցնոց	102—30
Գառպոն թուղթ (գաքիք) . .	936—
Գառպոն արծաթ (նոր) . .	90—
Ռուսիոյ Բոլ	90— 2
Գաղղիական լիրա	87—25
Անգղիական »	110—13
Դրմիդ	51—10

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Ալպեան լերանց տակէն չինուած նոր ներքնուղւոյ բացման հանդէսը կը կատարուի մօտերս, ի ներկայութեան Աւստրիոյ կայսեր, և վաճառաց փոխադրութիւնը կըսկսի առաջիկայ ամսոյ 6 ին։

= Գաղղիոյ երկրագործական նախարարն ազգային ժողովոյ ներկայացուցած է օրինական ծրագիր մը, որով մաքսերը կ'աւելցուին օտար երկիրներէ Գաղղիա ներմուծեալ դասւոյ համար։ Ըստ այսորիկ մէն մի եղէ պիտի առնուի 25 ֆրանգ մաքս, կովէ՝ 12, խոզէ՝ 6, հորթէ՝ 4 և ոչխարէ՝ 3 ֆրանգ։

= Գարատաղի լիվանէն Օսէսայի Նօվոռօսիյսքի համալսարանին վարժապետ Պօկրիչկի յանձնարարած է՝ իւր երկրի համար քաղաքային օրինաց դիւրք մը յօրինել։

= Ամերիկեան լրագիրք իրրև հետաքրքրական լինչ կը հրատարակեն, թէ հանրապետականաց նախագահական ընտրելի Պ. Պլէն երբեմն ուսուցիչ էր համերց ուխլից դպրոցի մը մէջ. իսկ ռամկավարականաց ընտրելի Պ. Քլիվլէնտ՝ կուրաց դպրոցի մը։

= Սև ծովու ռուսական նաւատորմին հրամանատարը Սև ծովու վրայ վաճառականութեան պաշտպանութեան համար երկու արագընթաց մարտանաւ պատրաստած է։ Այս կարգադրութեան պատճառն են վերջին ատեններս Պաթումի և Կ. Պոլսոյ չոգենաւային հաղորդակցութեան դժին վրայ տեղի ունեցած ծովային ասպատակութեան դէպքերն՝ յորս մեռած քաջարարք նաւերը կողոպտուած էին։ Ծովահէնք՝ 20–30 հոգիէ բաղկացեալ արագընթաց նաւերով առագաստանաւ և մինչև իսկ չոգենաւ վրայ յարձակելով կողոպտած և հանալով անպատիժ մնացած էին։ Երկու մարտանաւք վաճառական նաւերը պաշտպանելէ զատ, ծովահէնները բռնել և դատական իշխանութեան յանձնելու հրաման ունին։

= Անցեալ շաբթու ի Բեդբրոպուրկ Ամիրալ Նախիմֆ անուն նորակառոյց զրահաւորին նաւատեղի կատեաց փառաւոր հանդէսը տեղի ունեցաւ, ի ներկայութեան կայսեր, կայսրուհւոյ, դահամժառանգ իշխանի, և այլոց։ Զրահաւորին երկայնութիւնը 333, լայնութիւնը 61 ոտնաչափ պիտի լինի, և 8,000 ձիու զօրութիւն պիտի ունենայ։

= Ըստ Թայմսի՝ Միացեալ Նահանգաց կառավարութիւնն առաջարկեր է իրաւարար կանդնել Գաղղիոյ և Զինաստանի մէջ, և երկուքն ալ ընդուներ են սոյն առաջարկութիւնը։

= Ի Փարիզ, երեք աւուրց մէջ, ըստ նոր օրինաց՝ դատական իշխանութեան ներկայացած են կրկնատեսնութիւն խնդրող 150 աղերսագիրք, որոց երեք չորրորդը կանանց կողմէ ներկայացեալ են, յորս կը գտնուին կոմսուհի մը և մարքիզուհի մը (Ասէլինա Բադդի հռչակաւոր երգիչը)։

= Ռուսիոյ Զերէսքօֆի գաւառակին մէջ 300 գիւղացիք խարազանի պատժոյ դատապարտուեր են՝ վերջերս յարուցեալ անկարգութենց պատճառաւ։

= Զարն ոսկանել փորձող հրէաչակաւոր Հարթմանի չքաւորութեան պատճառաւ լինքնասպանութեան ղրոյցն՝ որ հրատարակեցաւ այս օրերս, կը հերքուի։ Հարթման ողջ է, և Լոնտոնի մէտերը կը բնակի եղեր։

= Ի Մարսիլիա հանրային ճաշարանք բացուած են, ուր ձրի կերակուր կը տրուի աղքատաց։ Լրագիրք կը գիտեն, թէ ծուլութիւնը քաջալերելու միջոց մը կը լինին այս հաստատութիւնք։

= Գաղղիոյ հանրային կրթութեան պաշտօնատան տեղեկագրէն կիմացուի, որ Գաղղիոյ մէջ այժմ 21484 դպրոց ունին հանրապետական արկղեր, և 442121 ուսանողք դրամ դրած են հոն։ 1879 ին, այս արկղերուն թիւն էր 10440, և դրամ ունեցող ուսանողք՝ 224200 էին։

= Ըստ նոր տեղեկութենց, այժմ ի Զվիցերիա 1160000 հատէն աւելի ժամացոյց կը շինուի, որոց արժէքն է 88 միլիոն ֆրանք, և 40 հազար դործաւորք կաշխատին։ Մօտերս ի Նէօշաթէլ Պ. Բօլ Փրամէր նոր ժամացոյց մը շինած, և արտօնագիրն Գաղղիայէն ստացած է։ Այս ժամացոյցը կանուանի Տիեզերական Աստղներով ժամացոյց, և մի և նոյն ատեն ցոյց կուտայ զանազան երկրաց ժամերը. օրինակի համար՝ մին կը ցուցնէ Փարիզի, Սուէիշի, Պոմպէի և Հուէի ժամերը միանդամայն, և ուրիշ մը՝ Նիւ-Եորքի և Ս. Ֆրանչիսքոյի ժամերը։

= Դերմանիոյ կայսրը քանի մը օրէ հետէ ի Կաշդէյն կը դտնուի, աւստրիական հողի վրայ, ուր սիրալիր կերպով տեսակցեցաւ Աւստրիոյ կայսեր հետ։ Այս տեսակցութենէ քաղաքական նպատակ չնճայուիր առ այժմ։

= Իտալիոյ կառավարութեան կողմէ սահմանադլխոյ վրայ հաստատուած խիստ Քարանդինաները լանդիր յարուցած են ինչպէս Զվիցերիի նոյնպէս և Վիէննայի և Հռոմի կառավարութեանց մէջ։ Հռոմայ աւստրիական դեսպանն հրահանգ ստացած է դիտողութիւններ ուղղել Իտալիոյ կառավարութեան՝ Աւստրիոյ դէմ հաստատուած քարանթինաներուն համար։

= Պարիսի Շահը վերահաստատեց Մեծ Եպարքոսութեան պաշտօնն, որ քանի մը տարիներէ հետէ ջնջուած էր, և զայն յանձնեց իւր մտերիմ խորհրդականաց միոյն՝ Միրզա Եուսուֆի՝ որոյ դուստրը նշանուած է Շահին անդրանիկ որդւոյն։ Նոր Մեծ-եպարքոսն անկեղծ բարեկամ է եղեր Պարսկաստանի և Ռուսիոյ դաշնակցութեան։

= Իտալիոյ կառավարութեան կողմէ սահմանադլխոյ վրայ հաստատուած խիստ Քարանդինաները լանդիր յարուցած են ինչպէս Զվիցերիի նոյնպէս և Վիէննայի և Հռոմի կառավարութեանց մէջ։ Հռոմայ աւստրիական դեսպանն հրահանգ ստացած է դիտողութիւններ ուղղել Իտալիոյ կառավարութեան՝ Աւստրիոյ դէմ հաստատուած քարանթինաներուն համար։

= Պարսից Շահը վերահաստատեց Մեծ Եպարքոսութեան պաշտօնն, որ քանի մը տարիներէ հետէ ջնջուած էր, և զայն յանձնեց իւր մտերիմ խորհրդականաց միոյն՝ Միրզա Եուսուֆի՝ որոյ դուստրը նշանուած է Շահին անդրանիկ որդւոյն։ Նոր Մեծ-եպարքոսն անկեղծ բարեկամ է եղեր Պարսկաստանի և Ռուսիոյ դաշնակցութեան։

= Ֆրանսիոյ դրամատեարք ոմանք որոշեցին առաջիկայ սեպտեմբերին ընդարձակ հողեր դնել Ավրիկէի հարաւակողմն, հողագործ և վաճառական գաղթականութիւն մը հիմնելու համար։ Առ նուազն հինգ հազար մարք ստորագրել ուզողներուն ուղղակաւ հրաւէր մը հրատարակուած է՝ յիշեալ դրամատեարց ժողովոյն ներկայ դտնուելու օգոստոս 19 ին ի Պէրլին։

= Անդղիա և Ռուսիա համաձայնած ծանուցագրեր ղրկեր են Մայրաքաղաքս, խնդրելով կայսերական կառավարութենէն որ Օսմ. զօրքերն եա կոչուին Խոդուբէ, և յանձնուի Պարսկաստանի, ըստ դաշնագրական արամադրութենց։

= Ամենէն արքայական պալատան առաստաղայ մէջէն հրդեհ ծագելով երեքշաբթի, և հովին ուժդնութեան պատճառաւ ծաւալելով, դրեթէ բոլոր պալատն այրեցաւեր եղեր, կահկարասեաց մեծ մասն մոխիր դարձեր, չորս զինուորք սպանուեր, 10 զինուորք ծխահղձ եղեր և 8 զինուորք վիրաւորուեր են։ Զօրաց ու հրշէջներու հետ ժողովուրդն ալ անձնուիրաբար աշխատեր են՝ հրդեհին առաջքն առնու համար։

= Անտամի թագաւորը՝ Ֆիւտաք մեռաւ, և յաջորդեց նորա երիտասարդ եղբայրն։

= Ի Թուլոն և ի Մարսիլիա օր յօրէ կը նուազին հնետախտին հարուածք։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼՔ

××× Փչո-ընեան բանակ (*)։ — Հիւանդագիտութեան սիրահար ամերիկացիք, արուեստական դործերով զբաղած ատեն, նորաձև կըրծքնիներ ալ կստեղծեն, կարծելով թէ հեռաձայնի և այլ այսպիսի օգտակար գիւտերու վրայ ըզմայլող հին աշխարհի մարդիկ նոցա ալ մի և նոյն ընդունելութիւնը պիտի ընեն։ Ատենէ մը հետէ Փարիզի մէջ Փչո-ընեան բանակ անուամբ նոր կրծնքի մը վրայ կը խօսուէը, և լրագիրք պատեհ առիթ համարելով զայն, ժողովրդեան հետաքրքրական և միանդամայն ծիծաղաշարժ լուրեր կուտային։ Այն ատեն ձեռքս անցաւ թերթ մը, որոյ անունն էր Ընդ առաջ, յիշեալ բանակին կողմանէ հրատարակեալ և որ կը պարունակէր Բրիստոսի նուիրեալ չատ մը աղօթքներ, նաև եւրոպական աչխարհին, և Հնդկաստանու և Ամերիկէի նման հեռաւոր երկիրներէն թղթակցութիւններ և հեռագրական լուրեր, որոց լեզուն գինուորական լինելով կարծես պատերազմի դաշտէ մը գրուած էին. զոր օրինակ, «Բարձակեցանք . . . դիւղին վրայ, և մեծ ճակատամարտ մը վերջը յաջողեցանք համդել ժողովուրդը, որ վերջապէս տան մը մէջ մեղի հետ միաբանելով աղօթեց։ Զինուորներէն մէկը յուրտի և յոդնութեան պատճառաւ ծանր հիւանդ է, աղօթեցէք վասն նորա։ Հաբրիւրապետ . . .»։ Ծիշեալ թերթը այս նոր կրօնքին կազմակերպութեան վրայ բաւական տեղեկութիւններ կուտար. բայց չատ զարմանալի և անհասանալի կը թուէր այս բանը, մտածելով թէ ո՛րքան անմտութիւն է 19րդ դարուն, Փարիզի նման քաղաքի մը մէջ այսպիսի խելացնոր գաղափարներ մտցնելու նպատակաւ ի զուր ժամանակ կորսնցնել և դրամ վատնել։ Ուստի ամենայն կերպիւ հետաքրքրական բան մը նկատելով ուզեցի երթալ, և տեղեկանալ թէ քաղաքին ամենէն նշանաւոր խօսարաններուն մէկուն մէջ քարոզութիւններ կը լինին, և քարոզիչը Մարեշալ տիտղոսով ամերիկացի գեղեցիկ աղիկ մ'է։ Գնացի կերակի օր մը, արանց և կանանց խուռն բազմութիւն մը կար. նոյն օրը «Գաղղիոյ համար ի'նչ կրօնք պէտք է» ին վրայ պիտի խօսուէը. փարիզացւոց հետաքրքրութիւնը չարժելու նի'ւթ մը։ Տասնի չափ 18-20 տարեկան աղայք հագած էին կարմիր գոյնով ֆանէլ շապիկներ, որոց կուրծքի կողմը մեծ տառերով գրուած էր Փչո-ընեան բանակ. ասոնք գինուորներն էին, որք բեմի նման տեղի մը վրայ պատրաստութիւններ կընէին, և աղօթքը կամ առնախօսութիւնը պիտի սկսէր. իսկ հետաքրքիր ժողովուրդն անհամբերութեան մէջ էր. ուստի այսպիսի պարագաներու մէջ, ըստ սովորականին, իւր անհամբերութեան նշանները դոյց տալ սկսաւ ոտքով, բայց գինուորաց դիտողութենց արժանացաւ, որք յիշեցուցին թէ ոչ թատրոնի այլ աղօթարանի մէջ կը գտնուին։ Վերջապէս 40 տարեկանի մօտ մէկը եկաւ բեմը, և օրիորդ Մարեշալի անհանգստութեան պատճառաւ նոյն օրը ներկայ չկարենալ գտնուիլը խմացուց. ասոց վրայ դժգոհութեան նշաններ երևցան, և երբ ժողովուրդը կերակին պարապը չանցընելու համար դուրս եկնելու կը պատրաստուէր, առենախօսն, որ բանակին մէջ ֆօլնել տիտղոսը կը կրէր, հանդարտեցոյց զամենքը, աղդարարելով թէ օրիորդ Մարեշալ աղօթքին վերջերը դալու դիտաւորութիւն ունի։ Քանի մը ղինուորիք ալ եկան նուագարաններով և սկսաւ աղօթքը. եղանակը դէշ չէր, ժողովրդեան մէկ մասը կերդէր, բեմին մօտ կարգերուն մէջ կային որ չերմեռանդաբար կերդէին։ Աղօթքէն վերջը Փօլնէլը ամերիկեան արտասանութեամբ սկսաւ խօսիլ. կարծես մոռցած էր նոյն աւուր առենախօսութեան նիւթը. կսպասէի որ այս նոր կը-

(*) Փարիզէն դրուած է առ մեզ։

ՏՊԱԿԱՆ Ս. Ն. ՓԱՅԼԱԶՅԱՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻ
Ա. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀԱՅ ՎԱ ԴԱՀՕՂՆ
Տպագրված է Ս. Էջմիածնի տպարանում 1913 թվին։

ՎԱՀԱՆԱՅ ՎԱՐԴԱԳԱՆ

ՕՍՇԵՆԻ ՀՈԼԼՈՒԵՅ

Վահանը ծնել է Ռուսիոյ մէջ, Ռուսերէն լեզուով կրթուած է եւ ռուսերէն լեզուով հրատարակած է իր առաջին գործերը։ Ապա ան հաստատուած է Ամերիկա, ուր ինքզինքը նուիրած է գրականութեան։ Ան ունի մեծ հռչակ ամերիկեան գրականութեան մէջ։ Ան գրած է բազմաթիւ վէպեր, պատմուածքներ եւ ուրիշ գործեր։ Ան ունի նաեւ մեծ համբաւ իբրեւ թատերագիր։ Ան գրած է մի քանի թատերախաղեր, որոնք ներկայացուած են Նիւ Եորքի եւ ուրիշ քաղաքներու թատրոններուն մէջ։ Ան ունի նաեւ մեծ համբաւ իբրեւ թատերագիր։ Ան գրած է մի քանի թատերախաղեր, որոնք ներկայացուած են Նիւ Եորքի եւ ուրիշ քաղաքներու թատրոններուն մէջ։

ՎԱՀԱՆԱՅ ՎԱՐԴԱԳԱՆ

PILULES HOLLOWAY

Ամերիկեան մեծ բժիշկ Հոլլոուէյ իր կեանքի 16 տարիները նուիրած է մարդկային հիւանդութիւններու ուսումնասիրութեան։ Ան ստեղծած է հրաշալի դեղահատեր, որոնք կը բուժեն ամէն տեսակ հիւանդութիւններ։ Ան ունի 1300 հիւանդանոցներ։

ՈՎՈՒ ՎՍ ԺՈՂՈՎՈՑՆ

ԳՈՎԱԶԴԱԿԱՆ Ս. ԴՈՒՌԻՆՅԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՐԱՆ

Dr. Kirchner
Berlin NW, Brücken-Allee 34

ՎԱՀԱՆԱՅ ՎԱՐԴԱԳԱՆ

(Հոգեբանական վիպակ)

Նկարեց Յակոբ Օշական

Ա

Ամէն իրիկուն, ճաշէն ետք, Վահան կ՚երթար իր սենեակը, կը նստէր գրասեղանին առջեւ, կը վառէր լամպը, կը հանէր գրիչը եւ թուղթերը, եւ կը սկսէր գրել։ Ան գրելու սովորութիւն ունէր տասնհինգ տարիներէ ի վեր։ Ամէն իրիկուն, առանց բացառութեան, ան կը գրէր։ Ինչ որ գրելու էր, ան կը գրէր։ Ինչ որ գրելու չէր, ան կը գրէր։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը սովորութիւն դարձած էր իրեն համար։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը հանգստացնէր զինքը։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը զուարճացնէր զինքը։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը գոհացնէր զինքը։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը հաճոյանար իրեն։ Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը սիրէր։

Ան կը գրէր, որովհետեւ գրելը կը սիրէր։